791. ԽԱՉՔԱՐ. Երկաւտված, Գողգոթավանքից հյուսիս, ավերակների մեջ, նիստերին.



ԵՍ՝ $\overline{\text{ՏՐ}}$ ԱՎԱԳ. . .
ԹՎԻՆ | ՋՀ (1521):

Ծանոթ. Դատելով լուսանկարից և դրա հիման վրա արված գրչագրից՝ միակ բառը, որի ինչ-որ չափով կարդացվում է ԿԱՆԿԵՑ[Ի]-ն է (վերծանության մեջ ԱՎԱԳ-ի տեղում) և ՋՀ թվականը (խմբ.):

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ, ՈՐ ԱՐԴ ՉԿԱ

792. ԽԱՉՔԱՐ. Աստվածածնի և առաքյալների պատկերներով.

Առաջնորդն . . բարեխաւս լեր Պռօշին . . . ողորմութեամբ պարոն Գուրգէնայ կանգնեցաք սուրբ խաչս . . .

Հրատ. «Լումա», 1900, Ա, 42, «Ազգ. հանդ.», VII-VIII, 422:

Ծանոթ. Ըստ Աղանյանցի, խաչքարը բերվել է Դսեղի Ս. Գրիգորից (ինչն անհավանական է), որի գրերը ոչնչացվել են թնդանոթի գնդակներից: Նրա վերծանությունն է.

Առաջնորդն փայլե . . . լբունք մէ. . .
խաւս լեր Պռօշին բախտա .ո. ունեն
առկանն . . . ղ . . . ասլա . . . ողորմութեամբ
պարոն Գուրգենոյ կանգնեցաք սուրբ:

ՔՈԲԵՐ (ՔՈԲԱՅՐ)

Թումանյան քաղաքի հյուսիսարևելյան թաղամասում, Դեբեդի ձախակողմյան լեռնաշղթայի ցածրադիր լանջին, երկաթգծից վերև, արևմտյան փեշին տեղավորված է Քոբայրավանքը:

Այն ԺԲ-ԺԳ դարերում, մասամբ նաև հետագայում Գուգարքի նշանավոր վանքերից ու հոգևոր-մշակութային կենտրոններից էր:

Համալիրը բաղկացած է ավելի քան 15 հուշարձաններից:

Վանքը կազմակերպվել է իբրև միաբնակ հայերի կենտրոն: Հունադավանությունն այստեղ ամրապնդվել է ԺԳ դարում: Սակայն քրիստոնյա երկու թևերի՝ միաբնակների ու երկաբնակ-քաղկեդոնիկների վճռական տարանջատում կամ հարաբերությունների արգելում, թվում է, չի եղել: Նրանք չեն խզել փոխադարձ հարաբերությունները, մինչև իսկ խաչքարեր են կանգնեցվել ԺԳ և հետագա դարերում, իսկ ԺԸ դարում Քոբերում եկե-

ղեցի է գործել, «այն էլ միաբնակ դավանությամբ»:[72] Այս երևույթը պետք է դիտել նախ միատարր հայ բնակչության, և ապա՝ մերձակա Օծունի, Հոռոմայրի, Իգահատի լուսավորչական կենտրոնների փոխկապերի առկայությամբ:

Քոբայրավանքի բոլոր եկեղեցիներն անխտիր եղել են թաղածածկ:

Թվագիր հին շինությունը Կյուրիկե թագավորի դուստր Մարիամ իշխանուհու կողմից 1171 թ. կառուցած ***Կաթողիկե*** փոքրիկ եկեղեցին է, որին հարավից կցված է թաղն ամբողջովին փլված մի մատուռ:

Գլխավոր եկեղեցին համալիրի հարավային եզրում է, ժայռի պռնկին: Այն իր չափերով ամենամեծն է, միանավ սրահ է, որի թաղը հենվել է հանդիպակաց 3 որմնամույթերից ծգվող կամարների վրա: Մուտքեր ունի երեք ճակատներից: Թաղն ու հարավային պատը կործանվել են, ըստ երևույթին, լեռներից պոկված ապառաժներից: Բեմական խորանը ծածկված է մոնումենտալ որմնանկարներով, որոնք աչքի են ընկնում գունագեղությամբ, կատարողական արվեստով, նոր կտակարանային թեմաների ճոխությամբ: Որմնանկարներ կան նաև գլխավոր եկեղեցու հյուսիս-արևելքից կցված ***երկրորդ եկեղեցու*** պատերին, որոնք պահպանվում են ամբողջական վիճակում: Ավերված է վերջինիս արևմուտքից և գլխավոր եկեղեցուն հյուսիսից կցված սյունասրահը:

Այս խմբի հյուսիսակողմում գտնվում է ***զանգակատունը***: Երկհարկ շինություն է: Առաջին հարկը մի փոքր ծգված համաչափություններով ուղղանկյուն սրահ է, որը ծառայել է իբրև տապանատուն: Տանիքը պահում են չորս կամարները, որոնք նստած են պատերի միջնամասում՝ մոտ երեք մետր բարձրությամբ տեղադրված պահունակների վրա: Կամարների անկյունագծային տեղադրության հետևանքով վերնամասում առաջացել են առագաստներ և տանիքին հաղորդել գմբեթածև կառուցվածք: Արտաքուստ զանգակատունը պսակում է սյունազարդ թմբուկով գմբեթը (այժմ՝ ավերված):

Եկեղեցական շենքերից մոտ 25 մետր դեպի հյուսիս-արևմուտք, սարալանջով վեր, տեղադրվել է ***սեղանատունը***: Ժամանակին ծածկված է եղել կամարածև տանիքով, որը պահում էին չորս որմնամույթերին հենած երկու կամարները: Հարավարևմտյան անկյունում ընդարձակ որմնախորշ կա, որը հատակագծին Г – ածև հորինվածք է տալիս:

Վանքի հիմնական համալիրից հյուսիս, պարսպի մուտքին մերձ ***չորրորդ եկեղեցին*** է՝ կցարկված սրահով: Սրբատաշ բազալտով շարված թաղակապ այս շենքերը արձանագրություններ չունեն: Արձանագրություններ չունի նաև վանքից հարավ-արևմուտք, ձորի մյուս ափին առանձնացած «Չիթախանց» վանքը: Սա ևս միանավ սրահ է, ունի ներքնահարկ, որը դամբարան է:

Արձանագրություններից բացի, վանքի մասին տեղեկություններ կան նաև ձեռագրաց հիշատակարաններում, մատենագիրների մոտ: Վարդան վարդապետը, վկայակոչելով Հովհաննես Սյուրկավագին, ասում է, որ այստեղ հնում ճգնավայր է եղել: Եթե վկայողը Հովհաննես Սարկավագն է, ապա խոսքը կարող է վերաբերել մինչև ԺԲ դարին: Որպես ճգնատեղի, ակներևաբար, ծառայել են քարայրները: Սակայն, դատելով Մարիամաշեն եկեղեցու մոտ եղած շինության մնացորդներից, գոյություն են ունեցել նաև առանձին, թերևս, պաշտամունքային շենքեր:

1171 թվականից, երբ Մարիամն այստեղ կառուցեց եկեղեցի, վանքն աստիճանաբար առաջնակարգ դիրք գրավեց տեղի հոգևոր ու մշակութային կյանքում:

---

[72] ***Մուրադյան***, ՀՎԱ, էջ166:

ԺԹ-ԺՊ դարերում Քոբայրը դառնում է դպրության աչքի ընկնող օջախներից մեկը: Այս վանքի հետ է կապված Դավիթ Քոբայրեցու անունը: Վանքն ունեցել է ճանաչված գրիչներ և որպես գրչության կենտրոն գործել է նույնիսկ ԺԵ-ԺԸ դդ.:

Վանական շենքերի պատերին ու տապանաքարերի վրացերեն արձանագրությունների ամբողջական ու պատմաբանասիրական հրատարակության պատիվը վերապահվում է Պարույր Մուրադյանին:[73] Տեղին է գիտնականի այն նկատառումը, որ «Քոբայրի կառույցների հնագույն մասը, տեղի անմատույց լինելու պատճառով, տակավին ոչ նկարագրված է և, առավել ևս, ոչ էլ ուսումնասիրված: Թերևս միմափոր այդ հատվածներում ապասելի էին հայերեն արձանագրություններ՝ 11-րդ դարի երկրորդ կեսին – 12-րդ դարի առաջին կեսին վերաբերող»:[74] Հիրավի, վանքի հարավադիմաց ահասարսուռ վերծիգ քարանձավային համալիրում, խիզախ լեռնագնացների (Վանիկ Մակարյան և ուրիշներ) ապամելով, կան կենցաղային իրեր, ձեռագիր մագաղաթյա պատառիկներ, գենքերի բեկորներ, որմնանկարներ ու հակիրճ հիշատակագրություններ: Այս անմատչելի թաքստոցում ապաստանել են անհիշելի ժամանակներից, փրկվել արաբների ու սելջուկների կոտորածներից, երկիրը սրսկոծող ավազակներից:

Պրակում ներկայացված են միայն հայերեն արձանագրությունները:

793. ԿԱԹՈՂԻԿԵ ԵԿԵՂԵՑԻ. արևմտյան մուտքի կիսակամար բարավորի շրջանակի վրա, 11 տող.

ՔՍ ԱՃ ՅԻՇԵԱ ՋՄԱՐԻԱՄ ԵՒ ՋՈՒՍՈՒԳԱՆ Ի ԳԱԼՍՏԵԱՆ ՔՈՒՄ:
ԹՒ[ԻՆ]:ՈՒ: (1171):
ԵՄ՝ ՄԱՐԻԱՄ, ԴՈՒՍՏՐ ԿԻՒՐԻԿԷԻ
ԹԱԳԱՒՈՐԻ, ՅԱՋԳԷ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ, ՇԻՆ-
ԵՑԻ ՋՍԲ ԿԱԹՈՂԻԿԷՍ ԱՒԳՆՈՒԹ[ԵԱՄ]Բ ՔՒԵՐ ԻՄՈ
ՈՒՍՈՒԳԱՆԱ, ՅԻՇԱՏԱԿ ՄԵՋ ԵՒ ՇՆՈՂ-
ԱՑ ՄԵՐՈՑ, ԵՒ ՀԱՒՐԱՔՒԵՐ ՄԵՐՈ ՈՒՍՈՒԳԱ-
ՆԱ, ԵՒ ԵՂԲԱՒՐ ՄԵՐՈ ԱԲԱՍԱ: ՈՐՔ ԵՐԿՐՊԱ-
ԳԷՔ ՔԻ Ի ՍԲ ՔԱՒԱՐԱՆԻՍ ՅԻՇԵՍՋԻՔ Ի
ՔՍ ՁԻ ՎԱՍՆ ՆԵՂՈՒԹԵ[ԱՆ] ՏԵՂՒՈՅՍ ՇԱՏ ԱՇԽԱՏԵՑ-
ԱՔ:

Հրատ. «Լումա», 1900. Ա. 44. «Լումա», 1900. Բ. 226. «Ազգ. հանդ.», VII-VIII. 420. ՎՏ. 30. Մովսեսյան. 65. Մելիքսեթ-Բեկ. 65. Ոսկյան. Գվ. 50. Մուրադյան. ՀՎԱ. 169. «Լրաբեր», 1978. 4. 77:

[73] *Մուրադյան*. ՀՎԱ. էջ 163-189:
[74] Նույն տեղում. էջ 169:

Ծանոթ. Վանքի հնագույն արձանագրությունն է և լավագույն վկայությունը այն մասին, որ ի սկզբանե այն եղել է հայ լուսավորչական հոգևոր հաստատություն:

Նախորդ հրատարակողների առավել ցայտուն անճշտությունը թվականն է. որ, չնայած իր միանգամայն հստակ ՈՒ գրությանն, ընդօրինակվել է ՈԲ և տարակարծությունների տեղիք տվել:

Թվականի հարցը, սակայն, միայն տարընթերցանությամբ չի ավարտվում: Արձանագրության մեջ հիշատակված է Մարիամի եղբայր Աբասի անունը, որն, ըստ Գանձակեցու մի վկայության, ծնված պետք է լիներ 1173 թ. և, բնականաբար, չէր կարող հիշվել իր ծնունդից երկու տարի առաջ գրված արձանագրության մեջ:

Տարակուսանքն այս հարցի վերաբերյալ արտահայտեց Պ. Մուրադյանը, որի կարծիքով, կամ Գանձակեցին է սխալվում, կամ՝ Ղ. Մովսիսյանը:

Գանձակեցին Աբասի ծննդյան կամ մահվան կապակցությամբ որևէ տարեթիվ չի հիշատակում, այլ միայն տեղեկացնում է, որ Կյուրիկեից հետո թագավորեց նրա որդին՝ «զմանուկն Աբաս երկոտասանամեայ», այնուհետև որ նա կին առավ Զաքարեի ու Իվանեի քույր Նանային և երկու տարի անց, 19 տարեկան հասակում մահացավ: Այստեղից կարելի է եզրակացնել, որ նա ամուսնացել է 17 տարեկան հասակում, իսկ քե որ թվականին է ծնվել կամ մահացել, Գանձակեցին չի հաղորդում: Ինչպես ցույց է տալիս քննվող արձանագրությունը, 1171 թվականին Աբասն արդեն ծնված էր և այս պարագան Գանձակեցու վկայությանն ամենևին չի հակասում: Մնում է շարունակել փնտրտուքը Մովսիսյանի կողմից Աբասի մահը 1192-ին դնելու խնդրում:

794. ԿԱԹՈՂԻԿԵ ԵԿԵՂԵՑԻ. արևմտյան պատին, մուտքից հարավ, 10 տող.



Թ[ՒԻՆ]:ՈՒԵ: (1186). ԵՍ ԽԱՉԳՈՒ[Ն]ԴՍ,
ՄԱՄՔԱՆԱ ՍՆՈՒՑԱՇՍ, ԳՆԵՑ-
Ի ՋԲՐՏԻՍ ԱՅԳԻՍ ԵՒ ԵՏՈՒ
Ի ՈԲ ԿԱԹՈՂԻԿԵՍ Վ[ԱՍ]Ն ԻՄ
ՀՈԳՈՅՍ: ԱՌԱՋՆՈՐԴ,
ՈՎ ԼԻՆԻ ՈԲ ԵԿԵՂՑՈՅՍ,
ՊԱՐՏԻ ԻՆՁ ՏԱՐԻՆ :Բ: (2) ԱՒ-
Ր ԺԱՄ: ՈՐ ԽԱՓԱՆԷ՝ Ի-
Մ ՄԵՂԱՑՍ ՏԵՐ Է ԱՌԱՋ-
Ի ԱՅ: ԱՄԵՆ:

Հրատ. «Լումա», 1900, Ա, 44, «Լումա», 1900, Բ, 326, Մուրադյան, ՀՎԱ, 170, «Լրաբեր», 1978, 4, 67:

Ծանոթ. Առաջին և երկրորդ տողերն Աղանյանցը կարդացել է *ես խաչգոգս մամքանայս կանգնեցի զբրմիսա գիսե բեմբո* անկապ, անհասկանալի, խճողված բառակույտով: Խաչգունդը հիշվում է նաև Օձունի 1216 թ. խաչքարի արձանագրությունում: *Բրտիս (Բրուտի)* այգին հավանաբար եղել է վանքի մերձակայքում:

795. ԿԱԹՈՂԻԿԵ ԵԿԵՂԵՑԻ. արևմտյան մուտքից աջ, չորրորդ շարքի անկյունաքարի երկու նիստին, 6 տող.



ԵՍ՝ ԱՐԵՒՇԱՅՍ ԵՒ ԱՄՈՒ[ՍԻՆ ԻՄ],
ՁՄԵՐ ՏՆԿԱԾ ԱՅԳ[ԻՆ ՏՈՒԱՔ]
ԲՂԱԵԹԻ ՍԲ ԿԱԹՈՂԻԿԵ[ԻՍ ԵՒ ՈՂ]
ՈՐՄԵՑԱՒ ՄԵՋ Ի ՏԻՐՈ[ՋՆ :Բ: ԺԱՄ:]
ԱՌԱՋՆՈՐԴ, ՈՐ ԽԱՓ[ԱՆԵ՝ ԻՄ ԽՈՑ]-
ԻՍ ՏԵՐ Է ԱՌ[ՋԻ ԱՅ]:

Հրատ. Մելիքսեթ-Բեկ, 65, Մուրադյան, ՀՎԱ, 171:

Ծանոթ. Նվիրագրի հարաւային ւպատը շրջանցող շարունակությունը ծածկված է ավելի ուշ Մարիամաշեն-Կաթողիկեին (1171 թ.) կցարկված մատուռի որմածքով: Արձանագրության երևացող մասը հրատարակել է Պարույր Մուրադյանը՝ առանց լրացնելու փորձի, որը նրա հետամուտ խնդրից դուրս է եղել: Կատարված լրացումները համարվում են հավանականւն: Բ (2) պատարագաժամը ընդունվել է պայմանականորեն, հետևելով նույն Արևշահի ու ամուսնու (կրկին չտալով անունը) կողմից Գողգոթավանքում կանգնեցրած Ս. Տերունական խաչքարի արձանագրության վկայությանը, ուր նվիրված այգու դիմաց տրված է երկու ժամ: Չի բացառվում, որ քննարկվող սույն նվիրագրի վերջում, մատուռի պատով ծածկված մասում լինի նաև թիվը, որը կպարզի նվերի և Գողգոթավանքի կառուցման ժամանակը: Արձանագրության երրորդ տողի *բղաեթի, սբ. կաթողիկե* անորոշ թվացյալ կապակցությունը տեղական խոսվածքի արդյունք պետք է լինի: *Բղաէթի* բարդությանը թերևս հարկ է բացել բղ = բաղ: այգի, էթի-էտի, կտրել, հատել, այսինքն՝ Այգեհատ (Իգահատ): Այսպիսով, Արևշահը և իր ամուսինը, հավանաբար 1180-ական թվականներին, այգի են նվիրել Ս. Կաթողիկե եկեղեցուն՝ ստանալով մեկական պատարագաժամ: Արևշահը հանդիպում է նաև Գողգոթավանքի արձանագրություններից մեկում իբրև նվիրատու:

796. ԿԱԹՈՂԻԿԵ ԵԿԵՂԵՑԻ. հյուսիսային պատի արևմտյան անկյունում, 6 տող.



ԵՍ՝ ԳԵՆԷ ՄԻԱՅԲԱՆԵՑ-
ԱՅ ՍԲ ԿԱԹՈՂԻԿԷԻՍ Ջ-
ԻՆ[Չ]ՃԱՐ ԿԱՅՐ. ԵՒ ՋՔԱՌԱԱՆ-
ԻՑՆ :Ա: (1) ԱՒՐ ՊԱՏԱՐԱԳ ԻՆՉ
ԷՏՈՒՆ: ՈՐ ԽԱՓԱՆԷ՝ ՈՐՈՇԻ ԱՅ: ԱՄԷՆ ԿԱՏ-
ԱՐԻՉՆ ԱՒՐՅՆԻ ԱԾ է:

Հրատ. «Լումա», 1900, Բ, 326. Մելիքսեթ Բեկ, 66. Մուրադյան, ՀՎԱ, 171:

Ծանոթ. Երրորդ տողում *գինչ* բառից *կայր* բաց է թողնված Չ տառը: *Միայբանեցա սբ կաթողիկես գինչ ճար կայր* կապակցության մեջ *միայբանեցայ* բառը պետք է ընկալել համախոհության և նվիրաբերության իմաստով: Հիշյալ Գէնէն ընդգծում է, որ միաբանել է, այսինքն սիրահոժար նվիրաբերել է Ս. Կաթողիկե եկեղեցուն ինչ ճար. հնարավորություն որ ունեցել է, որը, սակայն, 20 դահեկանից (50 գրամ ոսկուց) պակաս չի եղել:

797. ԽՍՀՔՍՐ. վերին կտորը, ընկած զանգակատան փլատակների մեջ, քիվին և խորանում, 3 տող.

ՆՇԱՆՈ ԱՅ ԲԱՐԵԽԱՒ-
Ս ԼԵՐ ՊԼԱՅՐՈՆ ԷՍՆԱԹԱՒՓԻՆ:
ԹՎԻՆ ՉԽԸ (1299):

798. ԽՍՀՔՍՐ. թևավոր, Քոբայրավանքի գլխավոր խմբից հյուսիս, Չորրորդ եկեղեցի տանող ոտնուղու եզրին, հորդաբուխ աղբյուրների մոտ.

Ի ԹՎԻՍ ՉԾԲ (1303):

Ծանոթ. Արձանագրությունը սուրբ նշանի բարձր պատվանդանի վրա է, չորս տող, եղծված ու հազիվ նշմարելի, որը հնարավոր չի եղել կարդալ: Թևավորի առաջ կա 4 սալատապան՝ անհիշատակագիր:

ԴՍԵՂ

Մշակութային ժառանգության արժեքներով հարուստ այս գյուղի հին անունն ավանդված չէ, իսկ Դսեղը ԺԲ դարից ավելի վաղ չէ, և այն, թերևս, ինչպես նկատել է Ջալալյանցը, նախապես կոչվել է Դրսեղ, Մամիկոնյանների ժառանգական կալվածքներից՝ Տայքից *հեռու, դուրս, դրսում եղած* իմաստը (եթե ոչ Դարսեղ): Նույն կարծիքը կրկնել է Էփրիկյանը:

Գյուղի տարածքում կան մ.թ.ա. II հազ. մինչև ԺԷ դ. բազմաթիվ հուշարձաններ: Դրանց թվում կարևորվում են Տզրկածովի և Դիտի ամրոցների ավերակները, վանական համալիրները, եկեղեցիները, մատուռները, գեղահրաշ կոթողներն ու խաչքարերը:

Դսեղը հանրահայտ դարձավ Մամիկոնյան նախարարական տան շնորհիվ: Հերոսական անցյալով Մամիկոնյանների առաջին ներկայացուցիչն այս կողմերում Աշոտ մարզպանն էր, որը Կյուրիկե Բ թագավորի հրամանով 1050 թ. կառուցեց Վարդաբլուր գյուղի ամրոցի ապարանքը: Նրանք նշանակալի մասնակցություն ցուցաբերեցին սելջուկների դեմ մղվող ազատագրական պատերազմներում՝ արժանանալով Զաքարյանների հովանավորությանը, նաև ձեռք բերելով ընդարձակ տիրույթներ: Աշոտի հաջորդ Համազասպ մարզպանից սկսած տոհմը կոչվում է Համազասպյան: Նրանցից նշանավոր էր Սարգիս զորապետը, որը սպանվել է 1201 թ. և թաղվել Սանահնի վանքում:

Հասարակական, պետական նոր միջավայրում, տնտեսական վերելքի պայմաններում Մարծպան Համազասպյանի և նրա որդիներ Ասլանբեկի, Գրիգորի, Սարգսի, Ամիրայի, եղբոր՝ Սմբատի և նրա որդիներ Համլիկի ու Սադունի ժամանակներում տոհմը հասավ հզորացման բարձրակետին, ԺԳ դ. առաջին կեսում ավարտվեցին Բարձրաքաշի ու Քառասնիցի շինարարական աշխատանքները, գյուղում կառուցեցին ապարանք ու եկեղեցի: Զաքարյանների գերակայությամբ, Կյուրիկյանների, Վաչուտյանների, Պռոշյանների, Արծրունիների համագործակցությամբ Դսեղի Համազասպյան-Մամիկոնյանները արժանավայել դիրք գրավեցին երկրում, նրանց կալվածքներն ընդգրկում էին Դեբեդի աջակողմյան վտակներ Մարց և Ալարեքս գետակների անտառապատ ծորահովիտներն ու արգավանդ դաշտերը՝ թեև կալվածքներ ունեին և այլուր (Կոտայք, Ուրծ, Խրամ): Տոհմի հևքը շարունակվեց մինչև դարավերջ, իսկ այնուհետև զրկվեց երբեմնի փառքից ու հզորությունից: Մատենագրական-վիմագրական աղբյուրների հիման վրա Ա. Շահինյանը շուրջ 40 տարի առաջ կազմել է Համազասպյան-Մամիկոնյան տան ճյուղագրությունը («Լրաբեր», 1963, N 3, էջ 84-93), որտեղ ներկայացված է տոհմի 6 սե-